

# Tdap պատվաստանյութը Ինչ է անհրաժեշտ Ձեզ ինանալ

(Պրկախտ,  
Դիֆթերիա,  
Կապույտ հազ)

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See [www.immunize.org/vis](http://www.immunize.org/vis)

Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են հայերենով և այլ լեզուներով: Տե՛ս [www.immunize.org/vis](http://www.immunize.org/vis) կայքը

## 1 Ինչու՞ պատվաստվել:

**Պրկախտը, դիֆտերիան և կապույտ հազը** շատ լուրջ հիվանդություններ են: Tdap պատվաստանյութը կարող է մեզ պաշտպանել այս հիվանդություններից: Եվ, երբ Tdap պատվաստանյութը տրվում է հղի կանանց, այն կարող է պաշտպանել նորածիններին կապույտ հազից:

**ՊՐԿԱԽՏՆՆ** (Կարկանախտ) այսօր հազվագյուտ է Միացյալ Նահանգներում: Այն առաջացնում է մկանների ցավոտ ջղաձգում և կարծրացում սովորաբար ողջ մարմնով մեկ:  
• Այն կարող է հանգեցնել գլխի և վզի մկանների ջղաձգման, այնպես, որ չես կարող բացել բերանդ, կույ տալ կամ, երբեմն, նույնիսկ շնչել: Պրկախտից մահանում է մոտավորապես 10 անձից մեկը, որոնք վարակվում են նույնիսկ լավագույն բժշկական խնամք ստանալուց հետո:

**ԴԻՖՏԵՐԻԱՆ** այսօր նույնպես հազվագյուտ է Միացյալ Նահանգներում: Այն կարող է հաստ շերտ առաջացնել՝ կոկորդի հետին մասում:  
• Այն կարող է առաջացնել շնչառական խնդիրներ, կաթված, արտի անբավարարություն և մահ:

**ԿԱՊՈՒՅՏ ՀԱՉԸ** (Չղաձգական չազ) առաջացնում է ծանր հազի ցնցումներ, որոնք կարող են առաջացնել դժվար շնչառություն, փսխում և քնի խանգարում:  
• Այն կարող է հանգեցնել քաշի կորստի, անզսպության և կողերի կոտրվածքների: Կապույտ հազով տառապող 100 դեռահասներից 2-ը և 100 մեծահասակներից 5-ը հոսպիտալացվել են կամ ունեն բարդություններ, որոնք կարող էին ներառել թոքաբորբ կամ մահ:

Այս հիվանդությունները առաջացել են բակտերիաների կողմից: Դիֆթերիան և կապույտ հազը անցնում են անձից անձ արտազատմամբ՝ հազի կամ փռոտի միջոցով: Պրկախտը հարուցող բակտերիաները թափանցում են մարմնի մեջ կտրվածքների, քերծվածքների կամ վերքերի միջոցով:

Մինչ պատվաստանյութերի կիրառումը՝ Միացյալ Նահանգներում յուրաքանչյուր տարի գրանցվել են տարեկան 200 000 դիֆթերիայի, 200 000 կապույտ հազի և հարյուրավոր պրկախտի դեպքեր: Պատվաստումները սկսելուց ի վեր, պրկախտի և դիֆթերիայի դեպքերը նվազել են 99%-ով, իսկ կապույտ հազի դեպքերը՝ մոտ 80%-ով:

## 2 Tdap պատվաստանյութ

Tdap պատվաստանյութը կարող է պաշտպանել դեռահասներին և մեծահասակներին պրկախտից, դիֆթերիայից և կապույտ հազից: Tdap-ի մեկ դեղաչառ սովորաբար տրվում է 11 կամ 12 տարեկան հասակում: Անձինք, ովքեր չեն ստացել Tdap այդ տարիքում, պետք է այն ստանան հնարավորինս շուտ:

Tdap-ը հատկապես կարևոր է առողջապահության մասնագետների և ցանկացած անձի համար, ով անմիջական շփում ունի 12 ամսականից ցածր երեխայի հետ:

Հղի կանայք պետք է ստանան Tdap-ի դեղաչափ **յուրաքանչյուր հղիության ընթացքում**՝ կապույտ հազից երեխային պաշտպանելու նպատակով: Կապույտ հազի խիստ, կյանքին սպառնացող բարդություններ ավելի շատ կարող են ունենալ երեխաները:

Td կոչվող մեկ այլ պատվաստանյութ պաշտպանում է պրկախտից և դիֆթերիայից, սակայն ոչ՝ կապույտ հազից: Յուրաքանչյուր 10 տարին մեկ անգամ պետք է տրվի Td դեղաչափ: Tdap-ը կարող է տրվել որպես այն դեղաչափերից մեկը, եթե դուք նախկինում երբևէ չեք ստացել Tdap: Tdap կարող է տրվել նաև ծանր կտրվածքից կամ այրվածքից հետո՝ կանխելու համար պրկախտի վարակը:

Բժիշկը կամ ձեզ պատվաստող անձը ձեզ կարող է լրացուցիչ տեղեկատվություն տրամադրել:

Tdap-ը կարելի է ապահով կերպով տալ այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ:

## 3 Որոշ մարդիկ չպետք է ստանան այս պատվաստանյութը

- Tdap պատվաստանյութն արգելվում է տալ այն անձին, որը երբևէ ունեցել է կյանքին սպառնացող այլերգիկ ռեակցիա դիֆթերիայի, պրկախտի կամ կապույտ հազի դեմ պատվաստանյութ ստանալուց հետո ԿԱՄ որպես նման պատվաստանյութի բաղադրիչ մաս: Պատվաստանյութ տվող անձին հայտնեք ցանկացած խիստ այլերգիկ ռեակցիաների մասին:
- Tdap չպետք է տրվի ցանկացած անձի, ով DTP-ի կամ DtaP-ի մանկական դեղաչափի ընդունումից հետո 7 օրվա ընթացքում կամ Tdap -ի նախկին դեղաչափից հետո ունեցել է կոմա կամ կրկնվող ցնցումներ, մինչև պատվաստանյութից բացի չհայտնաբերվի դրա պատճառը: Երբևէ դեռ կարող են ստանալ Td:
- Խոսք է գնում միայն հետ, եթե դուք՝
  - ունեք ցնցումներ կամ այլ ջղային համակարգի խնդիր,
  - ցանկացած պատվաստանյութից հետո ունեցել եք սուր ցավ կամ այտուցվածություն
  - պարունակող դիֆթերիա, պրկախտ կամ կապույտ հազ, երբևէ ունեցել եք Guillain-Barré Syndrome (GBS) կոչվող վիճակ,
  - ներարկման նշանակված օրը լավ չեք զգում:



## 4 Վտանգները

Պատվաստանյութ պարունակող ցանկացած դեղամիջոցի դեպքում հնարավոր են կողմնակի ազդեցություններ: Դրանք սովորաբար մեղմ են և ինքնուրույն վերանում են: Հնարավոր են նաև լուրջ ռեակցիաներ, սակայն դրանք հազվադեպ են:

Tdap պատվաստում ստացող մարդկանց մեծ մասը դրա հետ կապված խնդիրներ չունեն:

**Tdap-ին հաջորդող մեղմ խնդիրներ**  
(2ի խանգարել բուժգործողություններին)

- Ցավ՝ ներարկման հատվածում (4 դեռահասներից մոտավորապես 3-ի կամ՝ 3 մեծահասակներից 2-ի մոտ)
- Կարմրածություն կամ այտուցվածություն ներարկման հատվածում (մոտավորապես 5-ից 1 անձի մոտ)
- Նվազագույնը 38°C (100,4°F) մեղմ ջերմություն (25 դեռահասներից մոտավորապես 1-ի կամ՝ 100 մեծահասակներից 1-ի մոտ)
- Գլխացավ (10 անձանցից մոտավորապես 3-ից 4 անձի մոտ)
- Հոգնածություն (3 կամ 4 անձից մոտավորապես 1-ի մոտ)
- Սրտխառնուք, փսխում, լուծ, ստամոքսի ցավ (4 դեռահասներից մինչև 1-ի կամ 10 մեծահասակներից 1-ի մոտ)
- Դող, ցավոտ հոդեր (10 անձից մոտավորապես 1-ի մոտ)
- Ցավեր մարմնում (3 կամ 4 անձից մոտավորապես 1-ի մոտ)
- Ցան, այտուցված գեղձեր (քիչ հաճախող)

**Tdap-ին հաջորդող չափավոր խնդիրներ**  
(խանգարել է բուժգործողություններին, սակայն չի պահանջել բժշկական ուշադրություն)

- Ցավ այն հատվածում, որտեղ ներարկում է կատարվել (5 կամ 6-ից մոտավորապես 1 անձի մոտ)
- Կարմրածություն կամ այտուցվածություն ներարկման հատվածում (16 դեռահասներից մոտավորապես մինչև 1-ի մոտ կամ 12 մեծահասակներից 1-ի մոտ)
- 38,9°C (102°F)-ից բարձր ջերմություն (100 դեռահասներից մոտավորապես 1-ի կամ 250 մեծահասակներից 1-ի մոտ)
- Գլխացավ (7 դեռահասներից մոտավորապես 1-ի կամ 10 մեծահասակներից 1-ի մոտ)
- Սրտխառնուք, փսխում, լուծ, ստամոքսի ցավ (100 անձից մինչև 1-ի կամ 3-ի մոտ)
- Ամբողջ ձեռքի այտուցվածություն՝ ներարկման հատվածում (500 անձից մինչև 1 անձի մոտ):

**Tdap 2-ին հաջորդող սուր խնդիրներ**  
(Ի վիճակի չի եղել կատարելու սովորական գործողությունները, պահանջել է բժշկական ուշադրություն)

- Այտուցվածություն, սուր ցավ, արյունահոսություն և կարմրածություն ձեռքի ներարկված հատվածում (հազվադեպ):

**Խնդիրներ, որ կարող էին առաջանալ պատվաստումից հետո.**

- Մարդիկ երբեմն ուշագնաց են լինում բուժգործողություններից հետո, ներառյալ պատվաստումը: Մոտավորապես 15 րոպե նստած կամ պառկած մնալը կարող է օգնել կանխելու ուշաթափությունը և վայր ընկնելու հետևանքով առաջացած վնասվածքները: Հայտնեք ձեր բժշկին, եթե դուք ունեք թեթև գլխացավ կամ տեսողության փոփոխություն կամ զնգոց ականջներում:
- Որոշ մարդիկ ունենում են սուր ցավ ուսի մեջ և ձեռքը շարժելու դժվարություն՝ ներարկման հատվածում: Սա շատ հազվադեպ է պատահում:
- Ցանկացած դեղամիջոց կարող է առաջացնել սուր ալերգիկ ռեակցիա: Նման ռեակցիաները պատվաստանյութից շատ հազվադեպ են՝ 1 միլիոն դեղաչափից ավելի քիչ և կարող են առաջանալ պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամվա ընթացքում:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի հետ, պատվաստանյութի պատճառած լուրջ վնասվածքի կամ մահվան շատ հեռավոր հավանականություն կա:

Պատվաստանյութերի անվտանգությունը միշտ վերահսկվում է: Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք՝ [www.cdc.gov/vaccinesafety/](http://www.cdc.gov/vaccinesafety/)

Translation provided by the Immunization Action Coalition

## 5

## Ի՞նչ տեղի կունենա լուրջ խնդրի առկայության դեպքում:

**Ի՞նչ պետք է ես փնտրեմ:**

- Փնտրեք ձեզ վերաբերող ցանկացած բան, ինչպես, օրինակ՝ խիստ ալերգիկ ռեակցիայի նշաններ, շատ բարձր ջերմություն կամ անսովոր վարքագիծ:

- Խիստ ալերգիկ ռեակցիայի նշանները կարող են ներառել ցան, դեմքի և կոկորդի այտուցվածություն, ծանր շնչառություն, արագ սրտիվիտոզ, գլխացավ և թուլություն: Սրանք սովորաբար սկսվում են պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ անց:

**Ի՞նչ պետք է ես անեմ:**

- Եթե դուք կարծում եք, որ դա սուր ալերգիկ ռեակցիա է կամ այլ անհետաձգելի դեպք, որը չի կարող սպասել, զանգահարեք 9-1-1 կամ տեղափոխեք տվյալ անձին մոտակա հիվանդանոց: Այլապես՝ զանգահարեք Ձեր բժշկին:
- Այնուհետև, ռեակցիայի մասին պետք է զեկուցել Vaccine Adverse Event Reporting System-ին (VAERS) (Պատվաստանյութերի անբարենպաստ ազդեցությունների հաշվետվությունների համակարգ): Ձեր բժիշկը կարող է գրանցել այս զեկույցը, կամ դա դուք կարող եք ինքնուրույն էլ անել՝ VAERS վեբ կայքի միջոցով՝ [www.vaers.hhs.gov](http://www.vaers.hhs.gov), կամ զանգահարելով՝ 1-800-822-7967 հեռախոսահամարով:

VAERS-ը բժշկական խորհրդատվություն չի տալիս:

## 6

## Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիրը

National Vaccine Injury Compensation Program-ը (VICP) (Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիր) դաշնային ծրագիր է, որը կոչված է փոխհատուցելու որոշակի պատվաստանյութից տուժած մարդկանց:

Մարդիկ, ովքեր կարծում են, որ վնասվել են պատվաստանյութից, կարող են իրագրվել ծրագրի մասին և բողոք ներկայացնելու մասին՝ զանգահարելով 1-800-338-2382 կամ այցելելով VICP կայք [www.hrsa.gov/vaccinecompensation](http://www.hrsa.gov/vaccinecompensation): Բողոք ներկայացնելու համար ժամանակային սահմանափակում կա:

## 7

## Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Հարցրեք ձեր բժշկին: Նա կարող է ձեզ տալ պատվաստանյութի փաթեթի ներդիրը կամ առաջարկել տեղեկատվության այլ աղբյուրներ:
- Չանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահական բաժանմունք:
- Կապվեք Centers for Disease Control and Prevention-ի (CDC) (Հիվանդության վերահսկման և կանխարգելման կենտրոնների) հետ.
  - Չանգահարեք 1-800-232-4636 հեռախոսահամարով (1-800-CDC-INFO) կամ
  - Այցելեք CDC-ի կայք [www.cdc.gov/vaccines](http://www.cdc.gov/vaccines) հետևյալ հասցեով:

DCH-1281A AUTH: P. H. S., Act 42, Sect. 2126.

## Vaccine Information Statement Tdap Vaccine

2/24/2015

Armenian

Office Use Only



42 U.S.C. § 300aa-26

Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն: